



Համարը N 05-Ն

Տիպը Հրաման

Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2022.01.24-

2022.02.06 Պաշտոնական

հրապարակման օրը 27.01.2022

Ընդունող մարմինը Առողջապահության նախարար

Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար

Վավերացնող մարմինը

Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.06.2022

Տեսակը Հիմնական

Կարգավիճակը Գործում է

Ընդունման վայրը Երևան

Ընդունման ամսաթիվը 24.01.2022

Ստորագրման ամսաթիվը 24.01.2022

Վավերացման ամսաթիվը

Ուժը կորցնելու ամսաթիվը

Գապեր այլ փաստաթղթերի հետ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՈՒ ՌԵՑԻՊԻԵՆՏՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

24 հունվարի 2022 թ.

N 05-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՈՒ ՌԵՑԻՊԻԵՆՏՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2.1 հոդվածը՝

Հրամայում եմ՝

1| Սահմանել օրգանների և հյուսվածքների դոնորների ու ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման կարգը՝ համաձայն Հավելվածի:

2. Մույն հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունիսի 1-ից:

Ա. Ավանեսյան

Հավելված
ՀՀ առողջապահության նախարարի
2022 թվականի հունվարի 24-ի N 05-Ն
հրամանի

ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՈՒ ՌԵՑԻՊԻԵՆՏՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են օրգանների և (կամ) հյուսվածքների դոնորների ու ռեցիպիենտների ռեեստրի գործունեության, տեղեկությունների գրանցման և օգտագործման հետ կապված հարաբերությունները:

2I Օրգանների և (կամ) հյուսվածքների դոնորների ու ռեցիպիենտների ռեեստրը (այսուհետ՝ ռեեստր)՝ առցանց էլեկտրոնային տեղեկատվական համակարգ է, որը հասանելի է.

1) օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին,

2) օրգանների և (կամ) հյուսվածքների փոխապատվաստում իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին:

3I Ռեեստրը վարում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս ՍԼ Ավդաբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունը:

2. ՌԵԵՍՏՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

4I Ռեեստրը վարողի գործառույթներն են՝

1) բացառել՝ անձի մահից հետո դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնության առկայության դեպքում դիակը որպես դոնոր օգտագործելու հնարավորությունը,

2) հավաքագրել տեղեկատվություն դիակային դոնորից օրգանների և (կամ) հյուսվածքների վերցման, մշակման գործընթացի վերաբերյալ,

3) հավաքագրել օրգանների և (կամ) հյուսվածքների փոխապատվաստման կարիք ունեցող պացիենտների (այսուհետ՝ ռեցիպիենտ) տվյալները,

4) ապահովել փոխադարձ կապը՝ օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող և փոխապատվաստում իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների միջև,

5) հավաքագրել տեղեկատվություն իրականացված փոխապատվաստման վիրահատությունների վերաբերյալ:

5. Ռեեստրը բաղկացած է երեք ենթաբաժիններից՝

1) դոնորների տվյալների շտեմարան,

2) ռեցիպիենտների տվյալների շտեմարան,

3) փոխապատվաստված դեպքերի տվյալների շտեմարան:

6. Ռեեստրի դոնորների տվյալների շտեմարանը վարողը ապահովում է.

1) դոնորի վերաբերյալ տվյալների հավաքագրումը,

2) «դոնորի՝ անձի մահից հետո դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնության բացակայության ստուգումը էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով և հաստատումը,

3) դոնորից վերցված օրգանների և (կամ) հյուսվածքների վերաբերյալ տվյալների հավաքագրումը,

4) փոխադարձ կապի ապահովումը՝ օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող և փոխապատվաստում իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների միջև՝ իրականացնելով ռեցիպիենտի ընտրություն՝ համապատասխան օրգանի և (կամ) հյուսվածքի համար,

5) դոնորից օրգանների և (կամ) հյուսվածքների վերցման, մշակման և փոխապատվաստման ողջ գործընթացի մշտադիտարկում:

7I Ռեեստրի դոնորների տվյալների շտեմարանում գրանցվում են օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններից հավաքագրված հետևյալ տեղեկությունները՝

1) դոնորի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, բնակության և/կամ հաշվառման վայրը, սեռը,

2) որ օրգանը և/կամ հյուսվածքն է վերցվել դոնորից, և որ բժշկական կազմակերպություն է ուղարկվել,

3) օրգան և (կամ) հյուսվածք վերցնող բժշկական անձնակազմի վերաբերյալ տեղեկատվությունը,

4) օրգանի և (կամ) հյուսվածք վերցնելու ամսաթվի, օրգան և (կամ) հյուսվածք վերցնելը սկսելու և ավարտելու ժամերի վերաբերյալ տեղեկատվությունը,

5) օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից դոնորական օրգան և (կամ) հյուսվածքը չվերցվելու վերաբերյալ պարզաբանումը:

8. Ռեեստրի ռեցիպիենտների տվյալների շտեմարանը ապահովում է.

1) օրգանների և (կամ) հյուսվածքների փոխապատվաստման կարիք ունեցող ռեցիպիենտների վերաբերյալ տվյալների հավաքագրումը,

2) փոխադարձ կապի ապահովումը՝ օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնող, մշակող և փոխապատվաստում

իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների միջև՝ իրականացնելով ռեցիպիենտի ընտրություն՝ համապատասխան օրգանի և (կամ) հյուսվածքի համար,

3) իրականացված փոխպատվաստումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը,

4) բժշկական կազմակերպության կողմից օրգանը և (կամ) հյուսվածքը չվերցվելու, կամ վերցնելու՝ սակայն չօգտագործելու պատճառների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը,

5) ռեցիպիենտների առաջնահերթությունների սահմանումը ինքնաշխատ եղանակով՝ ըստ հավաքագրված տվյալների:

9I Ռեեստրի ռեցիպիենտների տվյալների շտեմարանում փոխպատվաստում իրականացնող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1) ռեցիպիենտի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, բնակության և/կամ հաշվառման վայրը, սեռը,

2) այն օրգանը, որն անհրաժեշտ է փոխպատվաստել ռեցիպիենտին,

3) փոխպատվաստման հրատապության աստիճանը,

4) ռեցիպիենտի հիմնական ախտորոշումը, ախտորոշման հաստատման օրը, ամիսը, տարեթիվը,

5) ռեցիպիենտի արյան խումբը, ռեզուս պատկանելությունը,

6) ռեցիպիենտի մոտ հեպատիտ Բ-ի, հեպատիտ Յ-ի, ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՁԻԱՀ) առկայությունը,

7) փոխպատվաստման հարաբերական հակացուցումների առկայությունը:

10I Երկրամի փոխպատվաստման անհրաժեշտության դեպքում, սույն կարգի 9-րդ կետում նշված տեղեկատվությունից բացի, նշվում են նաև՝

1) ծրագրային հեմոդիալիզի սկիզբը,

2) ռեցիպիենտի՝ մարդու լեյկոցիտային հակազենի (HLA-Human Leycocyte Antigen) տիպավորման տվյալները,

3) եթե նախկինում ռեցիպիենտը փոխպատվաստվել է, ապա նշվում է նաև նախորդ դոնորի՝ մարդու լեյկոցիտային հակազենի (HLA-Human Leycocyte Antigen) տիպավորման, տվյալները:

11I Ռեեստրի ռեցիպիենտների տվյալների շտեմարանից ռեցիպիենտի վերաբերյալ տվյալները հանվում են հետևյալ դեպքերում՝

1) եթե ռեցիպիենտին իրականացվել է փոխպատվաստում,

2) եթե ժամանակի ընթացքում հայտնաբերվել է բացարձակ հակացուցում փոխպատվաստման համար,

3) ռեցիպիենտի մահվան դեպքում,

4) ռեցիպիենտի անձնական դիմումի համաձայն:

12I Օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստող բժշկական կազմակերպությունից հավաքագրվում են հետևյալ տեղեկությունները՝

1) ռեցիպիենտի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին, բնակության և/կամ և հաշվառման վայրերը, սեռը,

2) որ օրգանը և/կամ հյուսվածքն է փոխպատվաստվել,

3) օրգանի և (կամ) հյուսվածքի փոխպատվաստման ամսաթվի, փոխպատվաստումը սկսելու և ավարտելու ժամերի վերաբերյալ,

4) օրգանի և (կամ) հյուսվածքի փոխպատվաստումն իրականացնող բժշկական անձնակազմի վերաբերյալ,

5) բժշկական կազմակերպության կողմից փոխպատվաստման համար օրգան և (կամ) հյուսվածք վերցնելու, սակայն չօգտագործելու պարզաբանման վերաբերյալ

6) ռեցիպիենտի առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն՝ հարցման օրվա դրությամբ:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 27 հունվարի 2022 թվական: